**ներով ի խաղաղում և ի բարօրություն աշխարհի ժողովուրդների, որոնք ծարավի են ազատ ու արդար մի կյանքի:**

**Այս խոհերով, հարգալից սիրով ի Քրիստոս մաղթում ենք Ձերդ Սրբության արևշատ երկար տարիներ և աստվածասեր իրագործումներ Ձեր մեծ Եկեղեցու պատմական առաքելության ճանապարհին:**

**Փառք հրաշալի ծննդյան Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի: Ամեն:**

**ՎԱԶԳԵՆ Ա**
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ի պատասխան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Ամանորի և Փրկչի հրաշափառ Սուրբ Ծննդյան շնորհավորական գրությունների, ստացվել են քույր Եկեղեցիների կրոնական պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների կողմից այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական սիրո, եղբայրության ու համագործակցության ոգին քույր Եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների և կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար:

*
* *

Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության տոնի առթիվ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի կողմից քույր Եկեղեցիների հոգևոր պետերին ուղղվեց նաև հետևյալ ողջույնի հեռագիրը.

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»:

**Մեծ ուրախությամբ ողջունում ենք Ձերդ Սրբությունը մեր Փրկչին Հիսուսի Քրիստոսի Հարության հրաշալի ավետիսով, որ լույս է սփռում մեր բոլորիս կյանքի ճանապարհին, մեր խոհերին ու մեր ձեռաց գործերին, առավել ամրապնդելով մեր հոգիներում «զհաւատ, զյոյս, զսէր և զամենայն գործս, առաքինութեան»:**

**Սուրբ Հարության կենարար շնորհները թող առատապես բաշխվեն համայն մեր տառապյալ աշխարհին, որպեսզի մարդիկ ու ժողովուրդներ վերագտնեն իրենց հոգիների խաղաղությունը՝ բարեխնամ Աստուծո օրհնության ներքև:**

**Այս սուրբ օրերին եղբայրական հարգալից սիրով միանում ենք Ձեր**

191-91

**աղոթքներին և մաղթում ենք Ձերդ Սրբության արևոտ ու խաղաղ երկար տարիներ ի գլուխ ձեր պատմական Սուրբ Եկեղեցվո:**

**Օրհնյալ է Հարությունը Փրկչին մեր Հիսուսի Քրիստոսի:**

**ՎԱԶԳԵՆ Ա**
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին

*
* *

Ի պատասխան Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի՝ Փրկչի հրաշափառ Սուրբ Հարության շնորհավորական գրությունների, ստացվել են քույր Եկեղեցիների կրոնական պետերի և կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների ղեկավարների կողմից այդ առթիվ ուղարկված ջերմագին շնորհավորական հեռագրեր ու գրություններ, որոնցում մի անգամ ևս պայծառորեն արտահայտվում է քրիստոնեական սիրո, եղբայրության ու համագործակցության ոգին քույր Եկեղեցիների ու կրոնական այլ համայնքների ու կազմակերպությունների միջև:

Հանուն Հայոց Հայրապետի ջերմ շնորհակալություն ենք հայտնում ստացված պատասխան շնորհավորականների համար: